

ԾԻԾԵՌՆԱՎԱՆՔԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՆՈՒԱՆՈՒՄԸ, ՆԱՀԱՏԱԿԻ  
ԳԵՐԵԶՄԱՆԸ ԵՒ ԾԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Ալեքսան Յակոբեան

Ծիծեռնավանքի անունն առաջին անգամ յիշատակում է Ստեփաննոս Օրբելեանի «Սիւնեաց պատմութեան» մէջ մտած Հայոց ՄՂԳ (844) թուականի կալուածագրում (գլ. ԿԲ): Փիլիպպէ իշխանի կողմից Տաթև գիւղի նուիրատուութիւնը Սիւնեաց միտրոպոլիտական աթոռին հաստատում են աշխարհիկ աւատատէրերից բացի նաեւ նահանգի ազգեցիկ հոգեւորականները. «եւ ի կրօնաւորաց՝ Ահարոն Երիցու վանական, Գրիգոր քահանայ, Ստեփաննոս Մաքենոցաց վանական, Յակոբ Ույծայ աւագերէց, Մանկիկ Ծղկաց քորեպիսկոպոս, Ստեփաննոս Ծիծառնայ [տարբ. Ծիծառնոյ] վանական, Գրիգոր դրան երէց, Սիմէօն Շաղատոյ վանական, Գրիգոր Սիւնեաց վարդապետ»<sup>1</sup>:

Պատմիչը Ծիծեռնավանքն ընդգրկում է Սիւնիքի 30 ամէնից նշանաւոր եկեղեցիների ու վանքերի ցուցակում (գլ. ԿԱ), որը ԺԱ-ԺԲ դդ. կազմուած ցուցակի տպաւորութիւն է թողնում: Այստեղ Աղահէջք գաւառի վանքերի հատուածում թուարկում են հաւանաբար հետեւեալ երեքը՝ «Ծիծառնոյ վանք, Խաչատրոյ վանք<sup>2</sup>, Զիւնասարու<sup>3</sup> վանք»<sup>4</sup>:

Օրբելեանի բուն ժամանակին՝ ԺԳ դ. աւարտին է վերաբերում Ծիծեռնավանքի միւս յիշատակութիւնը աշխատութեան վերջին հատուածում (գլ. ՀԱ): Այստեղ թուարկում են Սիւնեաց միտրոպոլիտութեան 10 նշանաւոր վանքերն ու անապատները, որոնցից վերջինն է «Ծիծեռնակու սուրբ վանքն»<sup>5</sup>: Եւ վերջապէս, աւարտական գլխում (ՀԳ), որը Սիւնեաց 12 գաւառների բնակավայրերի ցուցակն

է Տաթևին մուծած հարկաչափերով, Աղահէջք գաւառի 38 գիւղերի թուում<sup>6</sup> յիշատակում է «Ծիծառնովանք» (տարբ. «Ծիծառնովանք») տեղանունը, որն անկասկած առաջացել է վանքի անուանումից: Գիւղը մուծում էր 10 միաւոր հարկ<sup>7</sup>, որը միջին չափ է 6-15 միաւոր հարկ մուծող աղահէջեան գիւղերի ցուցակում:

ԺԳ դարում Վարդան Արեւելցին իր «Աշխարհացոյցում» Սիւնիք աշխարհի նկարագրութիւնը սկսում է հետեւեալ կերպ. «Մեծ Սիւնիս եւ Փոքր Սիւնիս, ուր կայ աթոռն Եւստաթէի առաքելոյն, որ կոչի Տաթև, եւ Ծիծեռնայ վանքն եւ Բաղաբերդն...»<sup>8</sup>: Վարդանի «Աշխարհացոյցը» բազմաթիւ ընդօրինակութիւններ է ունեցել, որոնց գրիչները օգտագործել են «Ծիծառն», «Ծիծեռու», «Ծիծառնայ», «Ծիծառավանք», «Ծիծառնավանք» տարբերակները<sup>9</sup>:

ԺԷ դարում Թովմայ վարդապետ Վանանդեցին գրել է «Բան չափեալ ի սրբազան տեղիս աշխարհին Հայոց» չափածոյ ստեղծագործութիւնը, որտեղ յիշատակում է տասնեակ Հայոց վանքեր ու սրբատեղիներ, այդ թուում բուն Սիւնիքում միայն երեքը. «Իսկ յԱգուլեաց յուղի անկեալ, ՚ի սուրբ ուխտն Տաթև հասեալ: Զսրբութիւնսն՝ որ գումարեալ, Սեռն սիրով զնոքօք փարեալ: Եւ յԱնապատն անդուստ դիմեալ, Ուր է սրբոցն բնակ եղեալ: Անտի ՚ի վանսըն մեծ անցեալ, Որ Ծիծեռնայ էր կոչեցեալ»<sup>10</sup>:

Սրանով սպառում են Ծիծեռնավանքի յիշատակութիւնները միջնադարեան

մատենագրութեան մէջ: ԺԹ դարի վերջից սկսում են նրա նկարագրութիւնները գիտական երկերում: Հայր Ղեւոնդ Ալիշանը, Երուանդ Լալայեանը, Արտակ Եպիսկոպոս Սմբատեանցը եւ Կայծ-Սիւնին, յղելով ժողովրդի մէջ տարածուած աւանդութիւնները, նշում են, որ Ծիծեռնավանք անունն առաջացել է Պետրոս առաքելի ճկոյթի՝ ծիծեռնի անունից, որն, քեալի ճկոյթի՝ ծիծեռնի անունից, որն, քեալի մասունք, ինչ-որ ժամանակ պահուել է վանքում, կամ կապուած է ծիծեռնակի պաշտամունքի հետ<sup>11</sup>: Նրանք նաեւ վերապատմում են մէկ այլ աւանդութիւն, ըստ որի եկեղեցու կառուցման ժամանակ ագուալը ինքնագոհութեամբ փրկել է շինարարներին թունաւորուած ճաշից, որի մէջ օձ էր ընկել. հասկանալով իրականութիւնը՝ մարդիկ ագուալին թաղել են մի բարձր ժայռի մէջ, այն ա՛նուանելով «Ագուալի գերեզման» կամ «Ագուալախաչ», իսկ օձի պատկերը քանդակել եկեղեցու պատին<sup>12</sup>: ԺԹ դարի վերջին արդէն չգործող, սակայն շրջակայ ժողովրդի կողմից չափազանց սիրուած սրբատեղին ամէնից շատ ուխտաւորներ էր ընդունում Համբարձման եւ Սուրբ Խաչի տօներին:

Ինչպէս տեսնում ենք, Ծիծեռնավանքի եկեղեցու անուանումը չունի ուղիղ վկայութիւն: Վերջին տարիների աշխատանքներում փորձեր են եղել գտնելու այն, սակայն՝ անյաջող: Այսպէս, Սամուէլ Կարապետեանը, համարելով, որ «Ծիծեռնավանքի եկեղեցին մինչեւ 20-րդ դարի սկզբները Զէյլա գիւղի համար ծառայել է որպէս ծխական եկեղեցի», պնդում է, որ այն կոչուել է «Սուրբ Ստեփանոս»<sup>13</sup>: Յղումը կատարում է «Արարատ» հանդէսում հրատարակուած մի ցուցակի, որի մէջ, սակայն, յիշատակուող Զէյլա գիւղը (Ս. Ստեփաննոս եկեղեցիով) իրականում ոչ թէ Աղաւնոյի հովտի, այլ

Կապանի շրջանի Զէյլան է (ներկայումս՝ Դաւիթ-Բէկ)<sup>14</sup>: Յակոբ Սիմոնեանը, կրկնելով Զէյլա-Ծիծեռնավանք համադրման նոյն սխալը, գտնում է, որ «ծխական եկեղեցու վերածուած Ծիծեռնավանքը յայտնի էր Ս. Ստեփաննոս Նախավկայ կամ Ս. Մինաս անուամբ»<sup>15</sup>: Յղումը կատարում է «Արարատ» հանդէսի վերը նշուած սխալ ընկալուած ցուցակին, ինչպէս նաեւ Հ. Ղ. Ալիշանի աշխատութեանը (էջ 268) եւ այնտեղ նշուած «Նոր Դար» հանդէսի մի յօդուածի (էջ 72), որոնցում խօսքը իրականում գնում է խոզնավար գիւղի եւ նրա Սուրբ Մինաս եկեղեցու մասին<sup>16</sup>:

Այնուամենայնիւ, մեզ թուում է, որ Ծիծեռնավանքի եկեղեցու անուանումը պահպանուած է մատենագրութեան մէջ, սակայն՝ առանց վանքի անուան յիշատակութեան: Ժ դարի վերջի հեղինակ Մովսէս Դասխուրանցու (կոչուած նաեւ Կաղանկատուացի) «Աղուանից պատմութեան» մէջ Հայոց ՄՂԵ (846) թուականի տակ յիշատակում է Աղահէջք գաւառում արաբական զօրաբանակի հետեւեալ աւարտութեան եւ պարտութեան մասին. «Յետ այսորիկ արշաւանս առնէր [Խազր Փատգոսի որդին] յաշխարհն Սիւնեաց եւ գերի վարեալ զԲաղացն սահմանս՝ գայ ի ջանէ յԱղահէջ գաւառ՝ յաւան մի՝ Արքուզետն [a ձեռ.՝ ձեռագրերի Բ խմբի crv գետն] [a ձեռ.՝ ձեռագրերի Բ խմբի crv գետն] կոչեցեալ, եւ թախումը՝ Արքուզետն] կոչեցեալ, եւ իսկոյն հրամայէ այրել գեկեղեցին, որ Սրբոյն Գորգայ [a ձեռ.՝ crv ենթա-Սրբոյն ունի Գորգորկայ, եւ ենթախումը՝ խումբն ունի Գորգորկայ, եւ յայն-Գորգորի] էր անուանադրեալ: Եւ յայն-ժամ զօրութիւն Աստուածային հասեալ՝ հեծեալ մի ի ձիոյ ճերմակ ճեպով ելանէ յեկեղեցւոյն արտաքս, ակն յայտնի ամենեցուն, ընթացեալ ի բանակն՝ շփոթեալ զայրն անօրէն հանդերձ զօրօքն իւրովք

դարձուցանէ ի փախուստ ընդ սարն, որ կոչի Եղջերխոռո [a ձեռ. եւ Բ խմբի ձեռագրեր; Աջ ենթախմբի ձեռագրերը եւ նրանց յանգող բոլոր 3 հրատարակութիւններն ունեն Եղջիւր խոյի]. եւ անդ հողմ դժնդակ մըրկեալ շրջապատեաց զնոսա. եւ միայն ի ձի ապաստան փախուցեալքն գերծան. իսկ պաղանաւորքն [յ]առապուրք ի լերանց վերայ կորեան. եւ գերեալքն մնացին խաղաղութեամբ՝ փառս Աստուծոյ տալով»<sup>17</sup>:

Այս հատուածը Մովսէս Դասխուրանցին ընդօրինակել է Ժ դարի սկզբում կազմուած մի ժամանակագրութիւնից, որի մէջ, ենթադրաբար, հաւաքուած են եղել Աղուանից կաթողիկոսարանի դիւանում պահուող ձեռագրերի յիշատակարանների ժամանակագրական տեղեկութիւնները<sup>18</sup>, ուստի նրա հաւաստիութիւնը որոշակիօրէն երաշխաւորուած է: Ցաւօք սրտի, հիմնական անունները ձեռագրական լուրջ տարբերումներ ունեն, սակայն այսօրուայ գիտելիքներով բոլոր երեք դէպքերում էլ դժուար է վերականգնել Դասխուրանցու ինքնագիրը:

Որ եկեղեցու անուան ինքնագիր տարբերակը Գիորգն է (Գէորգ), երեւում է նախ եւ առաջ նրանից, որ Բ խմբի crv ենթախմբում տալիս է Գրիգորիայ ընթերցումը: Այն էլ կարող առաջանալ, եթէ ենթախմբի մայր ձեռագրի գրիչն իր առջեւ տեսնէր Գրիգորոյ քաջ ծանօթ բառը (որն առկայ է նախախմբում): Այն կարող էր առաջանալ միայն այն դէպքում, եթէ գրիչը (տուեալ դէպքում՝ Բ խմբի մայր ձեռագրի գրիչը) իր առջեւ տեսնէր կամ թելադրութեամբ լսէր ականջին փոքր-ինչ խորթ Գիորգայ անունը, որը համարելով գրչական սխալմունքի արդիւնք, նա կարող էր յօրինել crv ենթախմբի ձեռագրերի շնորհիւ մեզ հասած Գրիգորիայ տարբերակը: Հասկանալի է

նաեւ, որ նա ենթախմբի մայր ձեռագրի գրիչն առանց այլեւայլութեան կարող էր «ուղղել» այդ տարբերակը Գրիգորոյ-ի: Աւելացնենք, որ a ձեռագիրը «Աղուանից պատմութեան» մէջ 14 անգամ հանդիպող Գէորգ անունը 12 անգամ տալիս է Գիորգ տարբերակով: Բոլոր դէպքերում Բ խմբի ձեռագրերը նախընտրում են Գէորգ տարբերակը, բացի մի դէպքից (Բ գրքի 2 գլխում, էջ 120, տող 14), երբ crv ենթախմբի մայր ձեռագրի գրիչը նորից Գիորգիօրը «ընթերցել» է Գրիգորիօս, ընդ որում այն տեղում, որտեղ խօսքը, ոչ մի կասկած չի կարող՝ Սուրբ Գեորգի մասին է («...սուրբքն Վարոս, Մամաս, Մար, Սարգիս, Գէորգիօս [crv ձեռ.՝ Գրիգորիօս] վկայ, Կողմաս եւ Դամիանոս եւ մասն մի ի սուրբ քառասնիցն»): Եւ վերջապէս, «ճերմակ ձիով հեծեալի» յաղթանակը դժուար թէ կապ չունենայ ճերմակաձի նիզակաւոր Սուրբ Գեորգ յաղթանակող նահատակի հետ<sup>19</sup>: Հնարաւոր է թւում անգամ ենթադրել, որ Մովսէս Դասխուրանցու սկզբնաղբիւրի համար հիմք ծառայած ականատես գերու պատմածի մէջ Սուրբ Գէորգի եկեղեցուց ճերմակ ձիով յաղթանակող հեծեալի դուրս գալու մասին ասուած լինէր «Սուրբ Գէորգի անուն» արտայայտութիւնը, որը բաց է թողնուել գրի առնողի կողմից:

Որ լեռնանունը Դասխուրանցու ինքնագրում «Եղջերխոռո» է եղել (ոչ թէ՛ «Եղջիւր խոյի»), կասկած չի կարող յարուցել, քանի որ այդ ընթերցումն ունեն «Աղուանից պատմութեան» բոլոր հին եւ ինքնագրի վերականգման համար կարեւորութիւն ունեցող ձեռագրերը (abclrv): Ճիշտ է, հնագոյն a ձեռագրում (ՄՄ, 2եռ. 1531՝ ընդօրինակուած 1289թ. Յովհաննավանքում) «Եղջերխոռո» բառի վերջին տառի աջ ուղղաձիգ ստեղծը թղթի եզրի մաշուածութեան պատճառով

միայն ներքեւի ծայրով է նշմարուած: Դրա հետեւանքով a-ից ընդօրինակուած «երկրորդական» գրչագրերում բազմաթիւ տարբերումներ են յայտնուել. հ-ում առաջացել է «Եղջերխոռ» տարբերակ, d-ում՝ «Եղջերխո», իսկ g-ում, որին այս կամ այն կերպ յանգում են 1860 թ. մոսկովեան ու փարիզեան եւ 1983 թ. քննական հրատարակութիւնները, յայտնուել է «Եղջիւր խոյի» բառակապակցութիւնը: Սակայն հնագոյն ձեռագրի համապատասխան էջի (թերթ 372ա, աջ սիւնակ) ուշադիր զննութիւնն իրականում բացառում է անցման (արեւելեան) բոլորագիրը ու-ից բացի որեւէ այլ տառի ընկալման հնարաւորութիւնը:

Ինչ վերաբերում է Արքուագետ-Արքուագետ-Արքունագետ ընթերցումներին, ապա, մեր կարծիքով, ինքնագիրը պէտք է եղած լինի Արքուագետը, որից աւելից հեշտ ձեւով կարող էին ընդօրինամէնից հեշտ ձեւով կարող էին ընդօրինակուել թէ՛ a ձեռագրի Արքուագետը, թէ՛ crv ենթախմբի մայր ձեռագրի Արքունագետը: Սակայն պէտք է նշել, որ երեք ընթերցումաձևերի տարբերութիւնը էական է քանի որ բոլորի հիմքում էլ ընկալուել է Արք-Արքայ իմաստը (Ձորափոր գաւառի Արքունաշէն գիւղում ծնուած Սահակ Ձորափորեցի կաթողիկոսը շատ ձեռագրերում կոչուած է ինչպէս Արքունաշէնցի, այնպէս էլ՝ Արքուշէնցի<sup>20</sup>):

«Աղուանից պատմութեան» այս հատուածում յիշատակուած Սուրբ Գէորգ եկեղեցին որոշակի հաւանականութեամբ կարող է համարուել Ծիծեռնավանքի եկեղեցու հետ հետեւեալ փաստարկումների հիման վրայ.

ա) Եղջերխոռ լեռնանունը մատենագրութեան մէջ եւս մէկ անգամ յիշատակուած է 1407 թ. գրուած մի յիշատակարանում՝ Եղջախոռ ձեւով: Յիշատակագրութեան հեղինակ Առաքեալ

քահանան յայտնում է, որ աւագակների կողմից սպանուած իր եղբոր՝ տուեալ ձեռագրի գրիչ Բարսեղ քահանայի մարմինը եօթնամսեայ «յերկրէ յերկիր» փնտրտուքից յետոյ գտել է Եղջախոռ լեռան վրայ («ի սարն, որ կոչի Եղջախոռ»), այնտեղից տեղափոխել է Վաղաղեանավանք եւ ամփոփել Սուրբ Կարապետ եկեղեցու առջեւ («եւ առեալ զնշխարս նորա, եղաք ի տապան ի վանս Վաղաղեանոյ, առ սեմաւք դրանցն սբ. Կարապետին»)՝ Համադրելով այս տեղեկութիւնը Աղահէջք գաւառում մատնանշուած Եղջերխոռ լեռան յիշատակութեան հետ՝ պէտք է ենթադրենք, որ այդ լեռան առաւել հաւանական տեղը Սիւնիքի երկու սահմանակից գաւառների միջեւ է՝ Մղուկի, որտեղ Որոտան գետի ձախափնեակում գտնուած է Վաղաղեանավանքը, եւ Աղահէջքի: Ամենայն հաւանականութեամբ, դա այսօրուայ Իշխանասարն է (օտարների կողմից յորջորջուած «Իշխալի», 3550,4 մ), որի հարաւ-արեւմտեան լանջերն իջնում են դէպի Որոտանի հովիտ, իսկ հիւսիս-արեւելեան լանջերը մի քանի լեռնաբազուկներով հասնում են այսօր Աղանոյ անուանուած գետի (Ծիծեռնավանուց գետ, Աղօղլանջայ) աղեղնաձեւ հովտագծին<sup>22</sup>: Եթէ այս ենթադրութիւնը ճիշտ է, ապա «Աղուանից պատմութեան» մէջ յիշատակուող Աղապատմութեան» մէջ յիշատակուող Աղապատմութեան Սուրբ Գէորգ եկեղեցին, հէջք գաւառի Սուրբ Գէորգ եկեղեցին, որի առջեւ պարտութեան մատնուած արաբ զինուորները փախուստի էին դիմել դէպի Եղջերխոռ լեռը («ընդ սարն, որ կոչի Եղջերխոռ»), անհրաժեշտ է փնտրել գաւառի՝ դէպի Իշխանասարի կողմն ընկած բնակավայրերի շրջակայքում, այսինքն՝ Ծիծեռնավանուց գետի աջափնայ (հարաւային) ձորալանջերին:

բ) Արքուագետ-Արքունագետ աւանը կարող է համարուել Ծիծեռնավանքի







շարքում (էջ 210-211)<sup>59</sup>: Հարաւային ճակատի երեք դռներից երկուսը՝ արեւելեանը եւ կենտրոնականը, տեղադրուած են այդ պատի մօտաւորապէս 1/3 առանցքների վրայ, ինչպէս Քասաղի, Եղվարդի բազիլիկաներում եւ այլն: Եկեղեցու չորրորդ դռուը Հիւսիսային ճակատին է եւ դրուած է մօտաւորապէս Հարաւային պատի կենտրոնական դռան առանցքով:

Մօրուս Հասարթեանն առաջինն է նկատել «արեւմտեան» դռան անսովոր տեղը՝ արեւմտեանի փոխարէն Հարաւային ճակատում: Սակայն նա համարել է, որ դրա պատճառը արեւմուտքում տեղանքի անյարմարութիւնը է, եւ դրա մէջ տեսել հեթանոսական մեհեանի մի նշան: Այնինչ պեղումները բացեցին դժուար արեւմտեան պատի ներքեւի երկու շարքերի մէջ մտնող հսկայ ժայռի ուրուագիծը (կենտրոնից քիչ հարաւ), եւ ակնյայտ դարձաւ, որ դռուը արեւմտեան պատի կենտրոնի փոխարէն Հարաւային պատի արեւմտեան մասում տեղադրելու պատճառը հէնց այդ խոչընդոտն է եղել: Դրանով պարզ դարձաւ նաեւ, թէ ինչու է արեւմտեան պատն աւելի հաստ (150 սմ, ոչ թէ 125): Ըստ երեւոյթին, ճարտարապետն արդէն շարել էր այդ պատի դրսի շարքը՝ հիւսիս-արեւմտեան անկիւնի որմնախարսից սկսած, եւ երբ համոզուել է, որ ժայռն անհնար է քերել, նրա մի կտորը պարզապէս թողել է դէպի ներս 25 սմ-ով աւելի հաստացուած պատի լայնութեան մէջ (իսկ «արեւմտեան» շարունային դռուն էլ տեղադրել է Հարաւային պատի արեւմտեան ծայրին, իրօք, բոլոր համաչափութիւններից դուրս՝ անմիջապէս արեւմտեան պատին հպուած):

Դժուար է լրիւ ճշգրտութեամբ որոշել, թէ ինչ բարձրութիւն եւ ինչպիսի տանիք է ունեցել Միծեռնավանքի եկեղեցին Ա փուլում: Յովհաննես Սանամեանն

աւելի հաւանական է համարում, որ պատերը բարձր են եղել պահպանուած բազալտեայ հատուածից մի քանի շարք: Դռների համաչափութիւններից ելնելով՝ ենթադրուած է նաեւ, որ տանիքը եղել է փայտեայ եւ երկթեք՝ ներսում յենուելով երկու զոյգ փայտեայ սիւնների վրայ (այդպիսով՝ լինելով եռանակ), որոնք դրուած են եղել քարէ սիւնախարսիսիններին: Եկեղեցու շրջակայքում գտնուած երկու հսկայական միակտոր սիւնախարսիսները, հաւանաբար, հէնց եղել են առաջին փուլի փայտեայ սիւնների տակ:

Հնագէտների խումբը պեղեց նաեւ մեզ հասած խորանը եւ նրա տակ յայտնաբերեց հերթական եզակի գտածոն՝ եկեղեցու առաջին բեմի ճակատը եւ յատակը: Պարզուեց, որ Ա փուլում բեմի ճակատն ունեցել է միայն մէկ շարքի բարձրութիւն եւ շարուել է կոպտատաշ քարերով (որմնախարսիսների քարերին շատ նման), իսկ բեմի յատակը եղել է կաւաշաղախ: Ծակատի առջեւ ուշ շրջանի կոպիտ սալաշաղախի տակ յայտնաբերուեց նաեւ աղօթասրահի հաստ կաւահունց յատակի մի ամբողջ շերտ (էջ 208): Խորանից 1,5 մ հեռաւորութեան վրայ, նշուած կաւահունց յատակի մէջ թաղուած էր հնամենի կարասի ստորին մասը: Ըստ Յակոբ Սիմոնեանի՝ դա ցոյց է տալիս, որ ամենավաղ շրջանում եկեղեցական արարողութիւնների ժամանակ օգտագործուող դինին պահուել է ոչ թէ սկիհի, այլ կարասի մէջ:

Ա փուլի պատերի վրայ զարդանախշեր չկան: Բացառութիւն են կազմում միայն 3 հատ շրջանագծի մէջ առնուած հաւասարաթեւ խաչերը՝ փորագրուած Հարաւային պատի երկու դռների հսկայական միակտոր բարաւորների (արխիտրալ) կենտրոններում (արեւելեանի վրայ՝ արտաքուստ, կենտրոնականի վրայ՝ երկու

կողմից): Բոլոր 4 դռների բարաւորները դրուած են անտիկ շինարարական աւանդոյթից եկող կալուսակների (կրոնշտեյն) վրայ, որպիսիք, բացի Միծեռնավանքից, առկայ են նաեւ Տեղ գիւղի վաղմիջնադարեան միանաւ բազիլիկ եկեղեցու հարաւային դռան վրայ (էջ 206)<sup>60</sup>:

Ա փուլի բազալտեայ պատերը շարուած են անտիկ դարաշրջանի շինարարական տեխնիկային բնորոշ կաւաշաղախի օգտագործումով չորսուածեւ քարերի միջեւ: Ընդունուած է համարել, որ կրաշաղախը Հայաստանում սկսել է օգտագործուել Դ դարի կէսից (առաջին յայտնի յուշարձանը Աղցքի արքայական դամբարանն է)<sup>61</sup>: Ըստ այսմ՝ Միծեռնավանքի հիմնադրումը մեծ որոշակիութեամբ թուագրուած է Դ դարի առաջին կէսով:

Եւ մի վերջին դիտարկում: Վերականգնողական աշխատանքների ժամանակ (տանիքի կենտրոնական լանջերի կղմինդրը դնելուց եւ ուղիղ գիծ ստանալուց յետոյ) նկատուեց, որ եկեղեցու առանցքը դէպի արեւմուտք ճշգրիտ նայում է լեռան լանջին բարձրացող մի հսկայական ժայռի, որի ուրուագիծը երեւում է երկնքի Ֆոնի վրայ (ժայռի վեղաւում է երկնքի Ֆոնի վրայ) (ժայռի վեղաւում կենտրոնում գտնուող ճեղքուածքի մէջ մի հազարամեայ գիհի է աճում): Դրանից ծագեց այն ենթադրութիւնը, որ հաւանաբար հէնց այդ ժայռն էլ եղել է հեթանոսական շրջանում պաշտամունքի առարկայ Ագուաւաքարը, եւ եկեղեցին առուցողները այն յատակագծել են իրենց հինաւուրց ուխտատեղիի «տակ»:

**Շիւնարարական Բ փուլ (Ե դարի կէս)**

Երկրորդ շինարարական փուլի գլխաւոր խնդիրն է եղել բարձրացնել պատերը եւ աւելի լուսաւոր դարձած եկեղեցին ծածկել արդէն քառալանջ տանիքի տակ: Այս փուլին են պատկանում Ա փուլի բա-

զալտեայ շարքերի վրայ բարձրացող սպիտակաուսն ֆելզիտատուֆի քարից (ժամանակի ընթացքում արտաքինից բաց դեղնաւուն երանգ ստացած)<sup>62</sup> պատերը, որոնց մէջ չորսական մեծ լուսամուտներ կան Հարաւային ու հիւսիսային ճակատներում, բարձր կրկնալուսամուտներ (ինչպէս Լեռնակերտում, Փարպիում եւ Աշտարակում)՝ արեւմտեան ու արեւելեան ճակատներում, ինչպէս նաեւ 6 աւելի փոքր լուսամուտներ, երկուսը՝ արեւմտեան, չորսը՝ արեւելեան ճակատում: Բոլոր պատուհանները «երկարուկ, դէպի ներս լայնացող բացուածքներ են, որոնք աւարտուում են պայտածեւ կամարներով» (էջ 206): Կիսաշրջանածեւ մի բացուածք կայ արեւելեան ճակատում՝ կրկնալուսամուտների առանցքով դէպի վեր: Բ փուլում են կառուցուած խորանի ու աւանդատների թաղերը եւ նրանցից վեր խորանի «երկրորդ յարկի» պատշգամբն ու աւանդատների «երկրորդ յարկի» ուղղանկիւն յատակագծով սենեակները (գաղտնասենեակներ): Այս փուլում եւս առանց լուսամուտի թողնուած խորանի գմբէթարդը եւ դէպի աղօթասրահ կամարակապ բացուածքը շեշտուած պայտածեւութիւն ունեն (էջ 206):

Խորանի ճակատի երկու կողմերում եւ եկեղեցու արեւմտեան պատին Յովհաննէս Սանամեանն առաջին անգամ նկատեց համեմատաբար նեղ որմնամոյթների առկայութիւնը, որոնք ներքեւում հպուած են բազալտեայ շարքերին, իսկ վերեւում մտնում Բ փուլի պատերի շարուածքի մէջ: Դրանք համադրելով հարաւային եւ հիւսիսային պատերի չորսական լուսամուտների համաչափութեան հետ՝ ճարտարապետն ի յայտ բերեց Մօրուս Հասարթեանի կողմից չնկատուած այն փաստը, որ աղօթասրահի ներկայ 4 զոյգ մոյթերի եւ 5 զոյգ կամարների

փոխարէն եկեղեցու տանիքը սկզբնապէս (այս Բ փուլում) յենուած է եղել վերը նշուած նեղ որմնամոյթերի, 3 զոյգ բարակ մոյթերի եւ 4 զոյգ կամարների վրայ բարձրացող կենտրոնական նաւի այսօրուանից աւելի բարակ երկայնական պատերի վրայ: Հարաւային եւ հիւսիսային պատերի լուսամուտները դէպի ներս են բացուել հէնց նշուած 4 կամարների առանցքներով:

Այս փուլի եկեղեցու՝ արդէն քառաւանջ դարձած տանիքից պահպանուել եւ այսօր առկայ է միայն խորանի եւ աւանդատների «երկրորդ յարկի» վերելում բարձրացող հատուածը<sup>63</sup>: Դա երեք սենեակների քարէ թաղերն են: Աղօթասրահի մասում առաստաղը հաւանաբար կառուցուած է եղել փայտեայ ֆերմաներից (էջ 208), իսկ ամբողջ տանիքը եղել է կղմինդրեայ: Պեղումներից գտնուած հարթ, այսպէս կոչուած «մարտէլեան» տիպին նմանուող կղմինդրի կտորները (տափակ հաստ «առուակներ», երկու կողքից ելուստներով՝ իրար ամրանալու համար)<sup>64</sup> հաւանաբար հէնց այդ տանիքին են պատկանում: Ամենայն հաւանականութեամբ, Բ փուլի արտաքին քիւի մնացորդն է յայտնաբերուել վերականգնողական աշխատանքների ժամանակ (կենտրոնական նաւի հիւսիսային պատի փոքր լուսամուտի ուշ շրջանում փոխուած պարակալի տեղում): Դա ատամնաքիւ է, որի ատամիկները (սուխարիկներ) չափերը չեն համընկնում Գ եւ Դ փուլերի մոյթերի ատամնաքիւերի չափսերի հետ:

Հայ ճարտարապետութեան մէջ իբրեւ եզակի նմուշ պահպանուած Միծեռնավանքի պատշգամբը (ըստ Մօրուս Հասարթեանի՝ վերնայարկ-անտրեսոլ) դէպի աղօթասրահ է ուղղուած «պարզ խաբիսներ եւ խոյակներ ունեցող երկու

սիւների վրայ յենուած երեք կամարակապ բացուածքներով» (էջ 206): Նրա ֆունկցիոնալ նշանակութեան մասին մենք աւելի հաւանական ենք համարում Մօրուս Հասարթեանի կարծիքը, ըստ որի՝ «վերնայարկը ունի հիմնականում գեղագիտական նշանակութիւն»՝ որպէս լոյսի աղբիւր երկրորդական դեր խաղալով: Գիտնականն աւելացնում է. «Կարելի է ենթադրել, որ կամարների միջեւ կանգնեցուած են եղել ազատ թեւերով քարէ խաչեր, որոնք կամարակապ բացուածքների լուսաւոր ֆոնի վրայ երեւացել են իրենց ուրուանկարով (նման տպաւորիչ ձեւաւորում է ունեցել Սիւնիքի մի այլ հնագոյն կոթող՝ Աղուզի VI դարի մահարձանի եռակամար բացուածքով վերին մասը, որի խաչի բեկորները մինչեւ վերջերս գտնուելիս են եղել Սիսիանի տաճարում)»<sup>65</sup>: Աւելացնենք, որ «երկրորդ յարկի» 3 սենեակներն իրար հետ հաղորդակցուած են փոքր, աւելի շատ պատուհանի նմանուող ուղղանկիւն բացուածքներով, իսկ ներքեւից մուտքը հաւանաբար իրականացուել է շարժական աստիճանով՝ հարաւային սենեակի ճակատին բացուած նոյնատիպ մուտք-պատուհանից (հիւսիսային սենեակի՝ դէպի աղօթասրահ ուղղուած պատը որեւէ բացուածք չունի): Ուշագրաւ է նաեւ այն կառուցողական հնարքը, որ «երկրորդ յարկի» յատակի նիշում բոլոր 3 սենեակների պատերի պարագծով երկու կողմից տեղադրուած են մեզ հասած եզակի, չորսուածեւ կտրուածքով գերաններ, «որոնք, անկասկած, հակասեյսմիկ նշանակութիւն են ունեցել» (էջ 206):

Բ փուլում եկեղեցու եւ խորանի յատակը հաւանաբար նոյնութեամբ պահպանել է Ա փուլի կաւածեփը: Յամենայն դէպս, որեւէ այլ յատակի նշան մասնագէտները չեն յայտնաբերել: Սակայն պատերը եւ թաղերը կառուցուել են կրաշաղախի օգտագործումով: Ներքուստ բոլոր պատերը սուաղուել են շատ բարձրորակ կրասուաղով, որի մեծ մասը պահպանուել է մէկուկէս հազարամեակ եւ հասել մեզ (գլխաւորապէս ֆելզիտատուֆի հատուածներում, սակայն տեղ-տեղ նաեւ բազալտեայ շարքերի վրայ): Հաւանաբար պատերի սուաղումը ինչ-որ ժամանակով յաջորդել է Բ փուլի բուն շինարարութեանը, քանի որ 2 տեղում սուաղով են ծածկուել այդ փուլի զարդանախշուած քարերը (տե՛ս ստորեւ): Բոլոր դէպքերում պատերի սուաղումը կատարուել է մինչեւ Գ փուլը, որի որմնամոյթերը եւ կամարների վերեւի երկայնական պատերը հպուած են Բ փուլի պատերի սուաղին: Արեւմտեան պատի կենտրոնական նաւի հատուածի սուաղը ներկուած է բարձրորակ դեղնադարչնագոյն ներկով, իսկ հիւսիսային պատի արեւելեան կողմի երկու հատուածում պահպանուել են հնագոյն որմնանկարների մնացորդներ: Դրանցից մէկի վրայ ուրուագծուած են երկու կամ երեք սրբերի (ամբողջ հասարակուել են վերեւից): Հարաւային աւանդակի տան արեւելեան մասում մի լայնակի տան արեւելեան մասում մի լայնակի տան արեւելեան մասում է, եւ երեք շերտով սուաղը բացակայում է, եւ երեւում են ինչ-որ ժամանակ կառուցուած, իսկ հետագայում հանուած որմնասիւների ու կամարի հետքեր: Դրանք դրուել են սուաղումից առաջ, բայց՝ Բ փուլի բուն շինարարութիւնից յետոյ, քանի որ հպուել են պատերին: Յակոբ Սիմոնեանը եւ Յովհաննես Սանամեանը ենթադրում են, որ այդպիսի կամարով աւանդատան եւ Յովհաննես Սանամեանը ենթադրում են, որ այդպիսի կամարով աւանդատան մէջ մի երկրորդ խորան է առանձնացուել, որպիսիք «յայտնի են Արցախի միջնադարեան փոքրածաւալ միանաւ երկեցիներում» (էջ 209): Հարաւային կողմից խորանի թաղի սուաղի վրայ հրեշտակի որմնանկար է պահպանուել: Իրենց

հնութեամբ փաստորէն բացառիկ Միծեռնավանքի որմնանկարները, ցաւօք սրտի, դեռեւս ուսումնասիրուած չեն:

Բ փուլի պատերի վրայ քանդակուած զարդանախշերը քիչ են, սակայն՝ չափազանց արտայայտիչ: Արեւմտեան պատին եւ խորանի ճակատին յենուած «նեղ» որմնամոյթերի վրայի 4 խոյակները պարզ քիւեր ունեն (հորիզոնական սալեր՝ դէպի ներքեւ մոյթին կորագիծ ձուլուող) եւ զարդանախշեր չեն կրում: Կրկնաճառագայթներով 4 մասի բաժանուած ուղղանկիւններից եւ 6 մասի բաժանուած շրջանագծերից բաղկացած նուրբ զարդանախշ են կրում խորանի գմբէթարդի ճակատային պայտածեւ կամարից («յաղթակամար») դէպի խորանի ներս դուրս եկող երկու բացառիկ որմնախոյակները (իմաստները), որոնց վրայ զարմանալիորէն սուաղի կտորներ են պահպանուել: Գուցէ՛ Բ փուլի չպահպանուած 6 մոյթերից մէկի վրայ է դրուած եղել պեղումներից յայտնաբերուած այն խոյակի նմանուող քարը, որը պարզ քիւի տակ մի գլանակազարդ եւ ակոսիկ ունի, թէպէտ հնարաւոր է նաեւ, որ դա լինի Բ կամ Գ փուլի սուրբ սեղանի հորիզոնական քարի ջարդուած կտորը (այն ոչ միայն սրբատաշ մշակուած է 3 կողմերից ու վերեւից, այլեւ որոշ մշակուածութիւն ունի տակի մասում, այն էլ՝ փոքր ուռուցիկութեամբ եւ առանց կրաջրի հետքերի): Հիմնական զարդանախշերը արտաքին պատերի վրայ առկայ կրկնաշրջանագծի մէջ առնուած 9 հաւասարթեւ խաչերն են (վեցը՝ հարաւային, երկուսը՝ հիւսիսային, մէկը՝ արեւելեան պատին)<sup>66</sup> եւ բոլոր մեծ լուսամուտների պսակազարդերը՝ շախմատածեւ դասաւորութեամբ ատամնաւոր, տրամատաւոր եւ գծային նախշերով: Ընդ որում հարաւային եւ հիւսիսային ճակատների լուսամուտների վերելում դրանք պատի

Հարթութիւնից դուրս եկող կիսաշրջանաճեւ միակտոր պարակալների վրայ են (էջ 206), որոնք, ցաւօք, մեզ հասել են բաւականին հողմնահարուած վիճակում:

Բ փուլի ժամանակը որոշուում է խորանի վերեւի պատշգամբի համադրութեամբ Վայոց Ձոր գաւառում (Եղեգիսի եւ Արփայի գետախառնուրդի մօտ) Վարդանանց պատերազմի նահատակների մասունքների վրայ Գիւտ Արահեզացի կաթողիկոսի (461-478 թթ.) 9-րդ տարում կառուցուած մի եկեղեցու սիւնազարդ վերնայարկի հետ<sup>67</sup>: Մեզ չհասած այդ եկեղեցու նկարագրութիւնն ունենք Ստեփաննոս Օրբէլեանի մօտ. «Ապա ձեռն ի գործ արկեալ... Հիմն արկին սրբոյ կաթողիկէին յիններորդ ամին Գիւտայ կաթողիկոսի յամառան ամսամտին, որ օր Հինգ էր ամսոյն: Եւ կատարեալ զնա մեծածախ գանձիւք կանգնեցին ճեմարան երկնաման հրաշաքարտար շինուածով երկագմբէթ եւ եռախորան. եւ յերկուս կողմանս գաւիթս, սրահակս եւ վերնատունս սեւամքք եւ սքանչելի յօրինուածովք»<sup>68</sup>: Յաշուի առնելով նկարագրուած սիւնազարդ պատշգամբի («վերնատունս սեւամքք») բացառիկութիւնը՝ արդարացիօրէն ենթադրուում է, որ Միծեռնավանքի պատշգամբի կառուցման փուլը նոյնպէս պէտք է թուագրել Ե դարի կէսերով<sup>69</sup>: Կարելի է միայն աւելացնել, որ զարդանախշերի բաւականին արխաիկ տեսքը թոյլ է տալիս ենթադրել Ե դարի առաջին կէսի աւարտի հնարաւոր լինելը<sup>70</sup>:

Շինարարական Գ փուլ (Ե դարի վերջ - Ջ դարի սկիզբ)

Գ փուլի նպատակը եղել է եկեղեցու տանիքի փայտեայ մասը քարէ թաղերով փոխարինելը: Դրա համար քանդուել են աղօթասրահի 3 զոյգ բարակ մոյթերը, որոնց փոխարէն միեւնոյն ֆելզիտատուֆի

քարից կառուցուել են աւելի մեծ ծանրութիւն կրելու ընդունակ, այսօր մեզ հասած 4 զոյգ հաստ (քառակուսի) մոյթերը եւ նրանց վրայ յենուած երկայնական պատերը: Ընդ որում Բ փուլին պատկանող, արեւմտեան պատին եւ խորանի ճակատին յենուած նեղ որմնամոյթերը մնացել են, եւ կողքից նրանց աւելացուել են (հպուած վիճակով) մէկական ուղղաձիգ շարքով հատուածներ (էջ 209): Արեւմտեան պատի վրայ երկու հետք է մնացել Բ փուլի նեղ որմնամոյթերի վրայ ժամանակին կանգնած երկայնական պատերից: Դա մի ցցուած քարի կտոր է հարաւարեւմտեան որմնամոյթի խոյակի վերեւում (նոր երկայնական պատի առաջին կամարի կրնկաքարի կողքին) եւ մի ուղղաձիգ նեղ խորշ հիւսիսային երկայնական պատի վերին հատուածի կողքին (այդ խորշի մէջ խորացած են եղել Բ փուլի երկայնական պատի քարերը): Այս հետքերը ցոյց են տալիս, որ Բ փուլի երկայնական պատերի ուղղաձիգ գծերը խոյակներից վեր շարունակել են որմնասիւնների ուղղաձիգ գծերին (Գ փուլում այդ գծերը 10 սմ-ով ներս են դրուել):

Ճարտարապետը նկատել է հիւսիսային պատի թուլութիւնը (դրսի կողմից պահպանուել է երկրաշարժի կամ որմնախարսխի նստուածքի հետեւանքով առաջացած ուղղաձիգ ճեղքը, ինչպէս նաեւ վերին շարքերի որոշ թեքուածութիւնը եւ երկայնական կորութիւնը՝ մօտ 10 սմ)<sup>71</sup>: Այն ծանրութիւնից բեռնաթափելու համար նա տուել է հետաքրքիր լուծում. ներքուստ պատին հպուել են 7 որմնամոյթեր, որոնց վրայ բարձրացող 6 կամարների վրայ նստեցուել է հիւսիսային նաւի թաղի դրսի կողմի հիմքը (էջ 209)<sup>72</sup>:

Բազալտեայ աստիճանաձեւ գետնախարսխների վրայ դրուած հաստ եւ արդէն 4 զոյգ մոյթերի վրայ բարձրացուել

են երկայնական աւելի ամուր պատերը, որոնք ճարտարապետին թոյլ են տուել կառուցել աղօթասրահի առաստաղի այսօր մեզ հասած քարէ թաղերը (էջ 208)<sup>73</sup>: Դրանցից կենտրոնականը սլաքաձեւ (եռակենտրոն, ձուածեւ) կտրուածք ունի, իսկ հարաւայինը եւ հիւսիսայինը՝ շրջանաձեւ (էջ 205): Հիւսիսային նաւի թաղը աւելի նեղ է եւ ցածր՝ Բ փուլի պատի փոխարէն ամրացնող կամարաշարի վրայ յենուած լինելու պատճառով (էջ 205): Կենտրոնական նաւի թաղակիր երկայնական պատերի մէջ ճարտարապետն ամէն կողմից երկուական փոքր պատուհաններ է բացել: Քարէ թաղերի վրայ դրուած է տանիքը երեսպատուել է նոր կղմինդրածածկով՝ «մեքսիկական» կոչուող տիղրածածկով՝ «մեքսիկական» կոչուող տիղրածածկով, որի սեղանաձեւ «ապի կղմինդրով, որի սեղանաձեւ «առուակների» եւ կիսագլանների բազմաթիւ կտորներ յայտնաբերուել են տանիքի եւ բակի պեղումներից (էջ 206): Գ փուլի արտաքին քիւի քարեր պեղումներից չեն յայտնաբերուել:

Փոփոխութեան է ենթարկուել եկեղեցու բեմը: Նրա ճակատի գիծը առաջ է բերուել մինչեւ որմնամոյթերի առջեւի գիծը, իսկ յատակի նիշը բարձրացուել է հնի համեմատութեամբ մօտ 1 մետր: Խորանի պատերի վրայ այդ նիշով յատակ պահպանուել է կրաշրի գիծը, որից երկպահանուել է կրաշրի գիծը, որից երկուում է, որ բարձրացուած յատակի մէջ կրաշաղախ է օգտագործուել: Պեղումներից յայտնաբերուել է մի ֆելզիտատուրից տափակ քար, որը խոյակի սալաքարի է նմանուում, սակայն վերեւից սրբարի է նմանուում, 15 սմ հաստութիւն տալ է եւ ընդամէնը 15 սմ հաստութիւն ունի: Նրա ճակատը զարդարուած է լանամքով մշակուած գլանազարդով, որն համաչափութիւններով նմանուում է Գ իր համաչափութիւններով նմանուում է Գ փուլի մոյթերի եւ որմնամոյթերի խոյակներից եօթի վրայ հանդիպող գլանազարդերին: Սակայն խոյակների սալերի հաս-

տութիւնը շատ աւելին է՝ մօտաւորապէս 25 սմ, ուստի մեզ մնում է ենթադրել, որ մէկ գլանազարդով տափակ քարը ոչ այլ ինչ է, քան Գ փուլի բեմի ճակատի քիւի սալաքարը: Աւելացնենք, որ «բարձր» բեմի սալաքարից մնացած այս միակ մնուելի վերեւի սրբատաշ երեսին կրասւանուելի շատ բարակ շերտի կտորներ են պահպանուել:

Գ փուլում աղօթասրահի առջեւի մասի յատակը հաւանաբար կրասուաղ է դարձուել, որի որոշ կտորներ բացուել են (պեղումների շնորհիւ) ուշ շրջանի կոպտաքար «սալաքարի» տակ եւ Ա փուլի կաւահունց յատակից բարձր (կարասի մնացորդները գտնուում էին այդ շերտի տակ): Յովհաննէս Սանամեանի ուշագրաւ դիտարկման համաձայն՝ արեւելքից առաջին շարքի զոյգ մոյթերի սրբատաշ բազալտեայ քարերով աստիճանաձեւ գետնախարսխների տակ շարուած կոպտանախարսխների տակ շարուած կոպտանախարսխներով հիմքերի բաւականին տաշ քարերով հիմքերի բաւականին բարձր լինելը (30 սմ) յուշում է, որ Գ փուլի ճարտարապետն, ըստ երեւոյթին, նախատեսած է եղել աղօթասրահի առջեւնում բարձր սալաքարով դաս կառուում բարձր սալաքարով դաս կառուցել, որը պէտք է ծածկէր մոյթերի կոպտաշար հիմքերը (էջ 210): Սակայն կրատաշար հիմքերը (էջ 210): Սակայն կրատաշար հիմքերի ակնյայտ բացակայութիւնը ցոյց է տալիս, որ այդ մտայղացումը չի ընդգրկուել, եւ փոխարէնը՝ բաւարարուել են դասի հատուածը ցածր նիշով կրասուաղ յատակով պատելով:

Գ փուլի բազմաթիւ զարդանախշեր են պահպանուել աղօթասրահի ներսի երկայնական պատերին, մոյթերի եւ որմնամոյթերի խոյակների եւ նրանց տակի քարերի վրայ: Չափազանց ուշագրաւ է հիւսիսարեւելեան մոյթի քիւի տակ դէպի արեւելք ուղղուած վերին ձախ քարի անկիւնում աւանակի եւ արմաւենու ծառի պատկերը, որը խորհրդանշում է Մաղկա-



կեղեցու ամենից աւելի պատուաւոր տեղում կարող էր իր հօր յիշատակի համար արձանագրութիւն թողնել ոչ այլ ոք, քան Միծեռնավանքի վերակառուցման տուեալ՝ Դ փուլի պատուիրատու իշխանը<sup>90</sup>: Նշանակում է՝ մենք ունենք ժԱ դարի կէսերին, Սիւննաց թագաւորութեան մի ծաղկուն ժամանակահատուածում (երբ թագաւորում էր Աշոտիկ իշխանաց իշխանի որդիներից մէկը՝ Սմբատ Բ (1040-1051) կամ Գրիգոր Ա (1051-1072)<sup>91</sup>), Աղահէճք-Քաշաթաղ գաւառում կառավարող որդի եւ հայր իշխանների անունները՝ Մհոտիկ<sup>92</sup> եւ Մխիթար Ա-թարբէկ<sup>93</sup>:

Շինարարական Ե փուլ (ԺԵ-ԺԸ դարեր)

Ուշ միջնադարում Միծեռնավանքի կեղեցուում որոշ կառուցողական փոփոխութիւններ են կատարուել, որոնց շնորհիւ՝ ըստ երեւոյթին աւերուածքներ ունեցող կառուցը համեմատաբար բարուօք վիճակի է բերուել: Մեծ հաւանականութեամբ, ժէ դ. սկզբին, Մելիք Հայկազ իշխանի ժամանակ ոչ միայն վանքի մեզ հասած պարսպապատը եւ սեղանատունն են կառուցուել (ինչպէս երեւում է քրդաբնակների կողմից վերջին ժամանակներում ոչնչացուած մի քարի արձանագրութիւնից)<sup>94</sup>, այլեւ կրաշաղախով շարուել են հարաւային 3 մոյթերը մէկ կամ երկու կողմից ընդգրկող այն կոպտատաշ բազալտից (որձաքար) կրկնամոյթերը, որոնց ամրացնող յատկութիւնները մասնագէտների կողմից գնահատուեցին զրոյական, եւ դրանք կազմաքանդուեցին վերականգնման ընթացքում<sup>95</sup>:

Աղօթարահի առջեւի մասում՝ ըստ երեւոյթին վերջնականապէս քայքայուած կրասուաղ յատակի վրայ դրուել է գետաքարերից եւ շուռ տուած խաչքարերի ու գերեզմանաքարերի կտորներից հաւա-

քուած կոպիտ «սալայատակ» (էջ 210), որն ամբողջովին հանուեց պեղումների ընթացքում<sup>96</sup>: Իսկ հարաւային նաւի մէջ հաւանաբար ժԴ-ԺԶ դարերում տնտեսական նպատակներով փորուած եւ օգտագործուած փոսերը՝ հացահատիկի հորերը, որոնք յայտնաբերուեցին պեղումների ընթացքում (էջ 210), լցուել են հողով ու քարով: Հաւանաբար նոյն ժամանակ կոպտաշար պատերով փակուել են նաեւ դռների եւ լուսամուտների մի մասի խոռոչները:

Հարաւ-արեւմտեան դռան վերելում, պատի մէջ ագուցուած քարի վրայ դրուած 1779 թ. արձանագրութեան համաձայն՝ այդ տարում կեղեցու տանիքին զանգակատուն է կառուցուել<sup>97</sup>: Այն նման է Սիւնիքի ուշմիջնադարեան այլ զանգակատներին՝ վեցսիւնանի եւ կոնաձեւ վեղարով (էջ 207): Վերականգնողական աշխատանքների ընթացքում շինարարները (ղեկավար՝ Գէորգի Առաքելեան) նկատեցին, որ զանգակատան վեղարի պահպանուած 6 շարքերի մէջ օգտագործուած քարերի թիւը օրինաչափութիւն է պարունակում՝ ներքեւից վերել համապատասխանաբար՝ 13, 11, 9, 7, 5, 3: Նոր տաշուած խնձորակի քարը դարձաւ վերջին շարքի 1-ը, որի վրայ էլ կանգնեցուեց վերածնուած կեղեցու նոր խաչը<sup>98</sup>:

Ամենայն հաւանականութեամբ, հէնց այս ժամանակ՝ ժԸ դարի վերջում, իրականացուել է տանիքի մաքրումը ջարդոտուած կղմինդրի մնացորդից եւ պատումը հաստ կաւաշերտով (նման ճարտարապետական լուծումը կարող էր օգտակար լինել շէնքին մի քանի տասնամեակով, բայց՝ ոչ աւելի)<sup>99</sup>: Կաւալիցքը պահելու նպատակով բոլոր պատերի վերին եզրագծերով տափակ, կիսամշակ քարեր են դրուել, առանց կրաշաղախի<sup>100</sup>:

ՇԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1 Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսակաւ. Ի լոյս ընծայեաց Սկրտիչ Էմին, Մոսկվա, 1861, էջ 152; Պատմութիւն Ասիական Սիսակաւ. Արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 208:
- 2 Խաչատրոյ վանքի տեղը հաստատապէս չգիտեմք:
- 3 Ջիւնասարի վանքի աւերակները գտնուում են Արաւայի Սոնասար գիւղում, Հոչանցի ձորի հարաւային բարձրադիր լանջին: Մանրամասն տե՛ս Ա. Յակոբեան, Հակարիի վերահովտի Արարայտ վիմագրերը. - «Հանդէս Ամսօրեայ», ԸԺԲ տարի, Վիեննա, 1998 (հրատ. 2000թ.), էջ 306, ծմթ. 24:
- 4 Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն, էջ 249:
- 5 Նոյն տեղում, էջ 365: Մօրուս Հասարթեանը սխալմամբ կարծում է, որ այդ գիւղը չի պատկանում Օրբէլեանի գոչին եւ աւելացուած է նրա տեքստին ժԸ-ԺԹ դդ. (իբրեւ թե՛ «Միծեռնավանքից բացի, այստեղ նշուած բոլոր վանքերն ու ամապատները հիմնադրուել են կառուցուել են XVII դ.»): Տե՛ս հեղինակի «Միծեռնավանք» յօդուածը «Պատմա-բանասիրական հանդէս»-ում, 1980, թիւ 2 (էջ 39), վերահրատարակուած Մօրուս Հասարթեան, Պատմա-հնագիտական ուսումնասիրութիւններ, Երեւան, 1985 ժողովածուում (էջ 219, ծմթ. 4): Իրականում «Սիւնեաց պատմութեան» ՀԲ գլուխ ամբողջութեամբ աւելի է երկի մեզ հասած հնագոյն ձեռագրում (ՄՄ, Ձեռ. 6271՝ ընթրիհատուած Հայոց ՋԿԲ-1513 թուականին) եւ Փարիզեան հրատարակութեան «Յատկութիւն» հետ (ԺԹ դար) որեւէ կապ չունի:
- 6 Մեզ հասած ձեռագրերում այդ թիւը 42 է: Գրչական տուեալ սխալի մասին մանրամասն տե՛ս Ա. Յակոբեան, Ա. աշխ., էջ 278-279:
- 7 ՄՄ, Ձեռ. 6271, թ. 335ա. Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն, էջ 375:
- 8 Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի. Հանգանակ հրատ. Հայկ Պետրեանի՝ համեմատութեամբ 24 ձեռագրի եւ տպագրի, Բարիգ, 1960, էջ 12:
- 9 Նոյն տեղում, տողատակ:
- 10 Հրատարակուած է «Շուքաղ» հանդէսում, Մոսկուա, 1860, տետրակ Թ, էջ 137: Իր ներքոյի վերջում թուվմա վարդապետը Աշել է գրութեան ժամանակը՝ «Թիւն Հայոց զՆՈՇԴ ցուցեալ», այսինքն՝ 1655 թ.:
- 11 Հ. Ղեւոնդ Ալիշան, Սիսակաւ. Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վիեննա-Ս. Ղազար, 1893, էջ 268; Ե. Լալայեան, Ջանգեզուր. Նիւթը աւել 268; Ե. Լալայեան, Ջանգեզուր. - «Ազգապագայ ուսումնասիրութեան համար». - «Աղոյս գրական հանդէս», Թիֆլիս, 1898, թիւ 2 (Երրորդ տարի, Դ գիրք), էջ 18, 46-49; Արտակ եպիսկոպոս Սմբատեան, Համառոտ պատմութիւն Սիւնեաց թեմի 6 նշանաւոր վանքերի. - Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան, գիրք Գ. Կազմեց Ս. Բեհրութեան, Երեւան, 1997, էջ 598-602:

- 12 Հ. Ղ. Ալիշան, Սիսակաւ, էջ 268; Ե. Լալայեան, Ջանգեզուր, էջ 18, 48; Ա. Սմբատեան, Ա. աշխ., էջ 600-602; Կայծ-Սիւնի, Ջէյվա (Թղթակցութիւններ). - «Նոր Դար», Թիֆլիս, 1890 (թիւ 105, 24 յուլիսի), էջ 2-3: Այս ամառնութիւնը պետք է կապել յատկապէս կամ միայն Միծեռնավանքի հետ: Այն լայնօրէն տարածուած է եղել Հայաստանի բազմաթիւ անկիւններում: Տե՛ս Ա. Ղանալեան, Աւանդապատում, Երեւան, 1969, էջ 224 (թիւ 605), 241-242 (թիւ 649), 262-263 (թիւ 703), 264 (թիւ 709), 269 (թիւ 721); Ա. Ղազիեան, Ազոսի պաշտամունքի հետքերը հայ ժողովրդական ամառնութիւններում. - Հայոց սրբերը եւ սրբավայրերը, Երեւան, 2001, էջ 135-137: Միծեռնավանքի հետ առընչուող երկու ամառնութիւնների (Միծեռն-ճկոյց եւ ագուա-օձ) առասպելաբանական հիմքերի վերաբերեալ մանրամասն տե՛ս Ս. Յարութիւնեան, Հայ առասպելաբանութիւն, Բէյրութ, 2000, էջ 306-313, 335:
- 13 Ս. Կարապետեան, Հայ մշակոյթի յուշարձանները խորհրդային Ադրբեջանին բնակցուած շրջաններում, Երեւան, 1999, էջ 142, ծմթ. 91:
- 14 Տե՛ս Հայկական Առաքելական (Լուսաւորչական) եկեղեցի Բոսնիայի մէջ. - «Արարատ», Վաղարշապատ, 1879 (տարի ժԲ, թիւ Թ), էջ 398: Ահրաժեշտ է նշել, որ ուսումնասիրողը սխալում է նաեւ՝ Միծեռնավանք գիւղը Ջէյվայի հետ համադրելով: Մինչեւ 1906 թ. կիսով չափ հարեանակ Ջէյվան գտնուում է Աղուանոյ գետի ձորի ձախ բարձրադիր լանջին՝ վանքից 3 կմ հեռաւորութեան վրայ: Իսկ Միծեռնավանք շէն գիւղը Արուսեան վրայ: Իսկ Միծեռնավանք շէն գիւղը Աղուանոյ աջ ափին, որտեղ ներկայումս բնակուում է 30 ընտանիք, ժԹ դարում լինելով քրդաբնակ, կոչուել է Քեօսալար, իսկ խորհրդային տարիներին, մինչեւ ազատագրումը՝ Գիւսուլու:
- 15 Յ. Սիւնեան, Յ. Սանատեան, Միծեռնավանք. - Հայոց սրբերը եւ սրբավայրերը, Երեւան, 2001, էջ 202:
- 16 Հմմտ. Հ. Ղ. Ալիշան, Սիսակաւ, էջ 268; Սպանդար Սպանդարեան, Խազնավար գիւղ (Թղթակցութիւններ). - «Նոր Դար», Թիֆլիս, 1890 (թիւ 72, Է տարի), 5 յունիսի, էջ 3-4:
- 17 Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի. Հանգանակ բնագիրը եւ ներածութիւնը՝ Վարդա Առաքելեանի, Երեւան, 1983, գիրք Գ, գլ. Ի (բնական հրատարակութեան մէջ սխալմամբ, Աջ ենթախմբի ձեռագրերի թեմ մէջ սխալմամբ, Աջ ենթախմբի ձեռագրերի թեմ մասակը՝ «Թիւն Հայոց զՆՈՇԴ ցուցեալ», այսինքն՝ 1655 թ.): Մէջբերուած հետետողութեամբ՝ ԻԱ), էջ 331-332: Մէջբերուած հատուածում տուել ենք կարեւոր տարրերը՝ ցումները եւ առանց նշման ուղղել բնական հրատարակութեան որոշ անընդունելի, հիմք-ձեռագրերի ընթերցումներից շեղուող տարրերը՝ «Աղուանից պատմութեան» ձեռագրերի մանրամասն վերլուծութիւնը տե՛ս Ա. Յակո-



հանդերձի իրով զգեստում, եւ կազմեցին յանկօք եւ իրովք եւ տարան ի գերեզման հանդերձ սաղմոսիք եւ օրհնութեամբք եւ երգօք հոգեւորօք եւ պայծառ լուցմամբք եւ եղին ի յարկս սրբոյն Յիզորուզոյի. եւ փայտ սրբոյ վկային յօրհնեալ խաչ՝ կանգնեցին ի վերայ գերեզմանին»:

43 Կ. Ղաֆաղարեան, *Դուին քաղաքը եւ նրա պեղումները*, Բ. Ա., Երեւան, 1952; Բ. Բ., Երեւան, 1982: Մանրակրկիտ ստուգել ենք նաեւ աշխատանքների օրագրերը (Յակոբ Սիմոնեանի օգնությամբ, որին յայտնում են երախտագիտութիւն):

44 Տե՛ս Ա. Քալանթարեան, Ն. Յակոբեան, *Կաթողիկոսանիստ Դուինը*. - Հայաստանը եւ Քրիստոնեայ Արեւելքը, Երեւան, 2000, էջ 75-79:

45 Սոյն տեղեկատւութեան համար երախտագիտութիւն են յայտնում Մետրոպ արքեպիսկոպոս Աշտնակցի:

46 Կ. Ղաֆաղարեան, *Աշ. աշխ.*, Բ. Բ., էջ 128-129:

47 Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի *Պատմութիւն*, գլ. ԼԸ, էջ 148:

48 Մենք կարողացել ենք օգտագործել միայն գերմաներէն թարգմանութիւնը՝ Georg Hoffmann, *Auszüge aus Syrischen Akten Persischer Märtyrer*, Leipzig, 1880, էջ 87-91:

49 G. Hoffmann, *Auszüge aus Syrischen Akten Persischer Märtyrer*, էջ 78-86: «Վկայաբանութիւն Տէր Գրիգոր անհատակի, որը վկայեց խոսքով արքայի օրերում» վերտառութեամբ այս երկի համատուր բովանդակութիւնն է. *Պերոզ* արքայի ժամանակներից սկսում բարեացակամ վերաբերմունքը քրիստոնեաների նկատմամբ *Քոսրու Անուշիրուանի* 10-րդ տարում փոխում է հետապնդումներով: *Ռայ* քաղաքից, *Միհրան* ցեղից նշանաւոր ազնուական *Փրիսնգուզուսապը* *Քուվար* արքայից արքայի կողմից նշանակում էր հիւսիսային սահմանի՝ *Գուրզան* եւ *Արրան* երկրի անհանգապետ: Կառատ արքայի 30-րդ տարում *Տրորիզան* կոչում սօցնի օրերին նա երեք երազ է տեսնում եւ, անսալով հրեշտակի յորդորին, մկրտում քրիստոնեայ՝ Գրիգոր անունով: Հրաժարում է կատարել *Հորմիզդ* աստծոյ երկրպագութեան «Յաշտը», որի համար թագաւորի կողմից պաշտօնանկ է արում եւ բանտարկում տակաոյի մէջ: Երեք տարի բանտարկում՝ ինչ-որ հրաշքներ է կատարում, որից յետոյ ազատում է եւ վերականգնում իր պաշտօնում: *Հոնուհաների* դէմ *Գուրզան* եւ *Արրան* երկրում տեղի ունեցած պատերազմում, լինելով զօրքի հրամանատարը, պարտութիւն է կրում եւ գերի տարում կայսեր մօտ: Նրա կողմից որպէս քրիստոնեայ աւելի բարձր պաշտօնի է արժանանում: Հոնուհան եւ իրանի միջեւ խաղաղութեան 14-րդ տարում գամ է բարձրանում *խոսրովը*, որը դեպքանութիւն է ուղարկում կայսեր մօտ *Ջաբերգանի* գլխաւորութեամբ: Վերջինս բանակցութիւններից յետոյ խնդրում է թոյլատրել Գրիգորին վերադառնալ հայրենիք: Կայսեր կամքին

հակառակ՝ Գրիգորը որոշում է վերադառնալ «Յիսուսի բնութեան վերաբերեալ Հոնուհաների սխալ հաւատի եւ ամբարիշտութեան պատճառով»: *Ջաբարգանի* հետ մեկնում է *Նսիբի* քաղաք, ապա հասնում արքայի մօտ, որից էլի պատիւների է արժանանում ու վերադարձում հին պաշտօնին: Բարկացած մոգերի պահանջներին զիջելով՝ խոսրովն ի վերջոյ հետացնում է Գրիգորին պաշտօնից եւ շղթայակապ անում: Սկսած նոր պատերազմում *Անտիոք* հասնելուց եւ այն աներելուց յետոյ արքան շարժում է *Հեզար* երկրի վրայ (Լազիկայ): Այդ ընթացքում նա *Մահոզէ դ' Բեթ Արամայէ* հանդիպում է մեծ մոհպատի հսկողութեան տակ պահուող Գրիգորին, *Միհրան* իշխանների պահանջով փորձում համոզել թողնելու քրիստոնեութիւնը եւ անյաջողութիւնից յետոյ յանձնում նրան արքայական բանտապետին: *Եզերաց* աշխարհից յաղթանակով վերադառնալուց յետոյ խոսրովը տեղափոխում է Գրիգորին ուրիշ բանտ՝ *Ջարտա դ' Բեթ Բայան*, *Տիզրոնից* արեւելք: Այստեղի բոլոր բանտարկեալները սուրբի շնորհիւ քրիստոնեայ են դառնում: *Ռայ* քաղաքից մեկին դրա համար պատժում են ակնջներն ու քիթը կտրելով, սակայն յետոյ արքայի հրամանով ազատում են ու վերականգնում պաշտօններում: Գրիգորին տեղափոխում են ուրիշ բանտ, իսկ երկրում սկսում են քրիստոնեաների լայնածաւալ հալածանքները: Նոր պարսկա-հռոմեական պատերազմի ժամանակ խոսրովի մօտ *Պերոզարք* քաղաք է գալիս *Հեզարի* իշխանը *Միհրան* ցեղից, եւ մոգերը նորից համոզում են նրան իր քրիստոնեայ հօրեղբորորդու համար մահապատիժ պահանջել արքայից: խոսրովը մէկ օր տատանւելուց յետոյ հրամայում է բերել Գրիգորին մեծ Մոհպատի մօտ: Սուրբը ուրախութեամբ հրաժեշտ է տալիս իր բանտակիցներին՝ *Լաղաւի* եպիսկոպոս *Ծալմային*, *Ջաբէի* եպիսկոպոս *Միհրնարսէին* եւ այլ վարդապետների եւ տարում արքայական բանակ: խոսրովի զօրքը տեղափոխում է մինչեւ *Դանահրիտ* կոչուող գիւղը՝ արքայական *Ակրայի* [ամրոց, դաստակերտ] մօտ: Այստեղ էլ ուրբաթ օրը ժամը 6-ին Գրիգորը գլխատում է (ըստ հաշտումների՝ դա 538 թուականն էր): Գիշերը քրիստոնեաների ամբոխը կարողանում է վերցնել անհատակի մարմինը եւ տանում թաղում *Բեթ Արամայէ* քաղաքում: Որոշ մասունքներ ուղարկում են տարբեր մարզեր եւ, որպէս հրաշագործ, պահում ոսկեայ տապանում է կարեւոր սրբատեղի:

50 Ձեռագիր Մանրնտիրներում պահպանում «Վկայաբանութիւն Սրբոյն Գրիգորի Պարսկի» վերտառութեամբ ոչ մեծ բնագիրը հրատարակել է Գալուստ Տէր-Մկրտչեանը (*Գրիգոր-Մանահիր Ռաժիկ, Միհրան տոմից*. - «Արարատ», ԼԵ տարի, Վաղարշապատ, 1901, էջ 468-474, բնագիրը՝ էջ 473-474): Այն հիմնականում նման է

ասորական օրհնակին (թէպէտ բաց է թողնում բովանդակութեան մեծագոյն մասը) եւ շեղում է միայն որոշ մանրամասներում: Դրանցից գլխաւորը վկայի աշխարհիկ անուան *Մանահիր* տարբերակն է. «Յորում ժամանակի ի հնգեւտասաներորդ ամի թագաւորութեանն խոսրովայ որդույ *Որմզդի* Պարսից արքայի] այդ ոմն, որում անուն էր Մանահիր, աշխարհաւ Ռաժիկ, յագգէ, որ կոչի Միհրան. սա էր ի զինորութեանն ի Վրաց աշխարհին եւ յուսացեալ յԱստուած... եւ անուանեալ Գրիգորիոս, զոր Սուրբ Հոգին կարգեալ էր ի դասու զուարթոնցն: Այս երանգիս Գրիգորիոս բազում տանջւան կրեաց ի Վրաց մարգպանէն, որոյ անուն էր Երուանդ Վշնասպ» (էջ 474): Գալուստ Տէր-Մկրտչեանը (նշ. աշխ., էջ 471) ասորական տարբերակի նկատմամբ իրաւացիօրէն առաւելութիւն է տալիս հայկական Մանահիրներում պահպանուած բնագրի որոշ մանրամասներ: Օրհնակ՝ *Մանահիր* աշխարհիկ անուանը, որը գրեթէ ժամանակակից (Զ դարի կէսի) հաստատում է գտնում «Գիրք թղթոցի» հաւատարմութեամբ: Սակայն հայկական Յայմատուրքում Գրիգորն անպատեւելիքն անրկայացում է որպէս Հայաստանում ապրած եւ անհատակուած վկայ. «Յայսմ ատուր (2 յունուար) վկայաբանութիւն սրբոյն Գրիգորի պարսկին ի Հայս»: Մկրտչի Աւգերեանը դրա հիման վրայ, իր կազմած ժողովածոյում զետեղել է «Սրբոյն Գրիգորիսի կամ Գրիգորի պարսկի եւ որոց ընդ մնա ի Հայս» վերտառութեամբ կցկտոր եւ խառնակ ժամանակագրութեամբ մի վկայաբանութիւն (*Լիակատար վարք եւ վկայաբանութիւնը սրբոց*, Բ. Ա., էջ 461-465), որի սկիզբն է. «Առաքինս այս եւ ճգնաւոր անհատակ Գրիստոսի՝ եր հայրենեօք ի Պարսից աշխարհէն ի Ռաժիկ անուանեալ ազգէ, յատուր երեւելոյն խոսրովու Պարսից արքայի՝ որդույ Կաւատայ. եւ կոչիւր յառաջ անուն նորա Մանահիր: Դէպ եղեւ սմա գալ պանդխտութեամբ յաշխարհս Հայոց եւ բնակել ի մայրաքաղաքն Դուին [այսպէ՛ս - Ա. Յ.]. ուր եւ վրայ հասեալ ճշմարտութեան Քրիստոսական հաւատոց՝ դարձաւ ի քրիստոնեութիւն. եւ ի մկրտութեան առուանեցաւ ի պատիւ Սրբոյն Գրիգորի Հայաստանեայց Լուսաւորչի՝ Գրիգոր կամ Գրիգորիս»: Գալուստ Տէր-Մկրտչեանը (նշ. աշխ., էջ 473) այս բնագիրն իրաւամբ համարում է «հիմնուած լոկ միամիտ յաւելումների, խախտու ընդհանրացումների եւ անփաստ ընդլայնումների վրայ»:

51 Հմմտ. J. Labourt, *Le christianisme dans l'empire Perse sous la dynastie Sassanide (224-632)*, Deuxième édition, Paris, 1904, էջ 178-180: Ի տարբերութիւն Գրիգոր Ռեշացոյ եւ Յազդանահի՝ հեղինակը չի ճանաչում Դուինում անհատակուած Յիզորուզիին:

52 *Գիրք թղթոց* (երկրորդ հրատարակութիւն), Երուսաղէմ, 1994, էջ 200 («Եւ ի տան եւ յեթներորդ ամի խոսրովու արքայից արքայի, ի մարգպանութեանն Նիհորականայ, արարին [Դուինի] ան-

տորականները - Ա. Յ.] ինչ շինած յանուն Մանահիրի Ռաժիկի, որ հաւատացեալ ի Քրիստոս եւ մկրտեալ անուանեցաւ Գրիգոր, եւ սպանաւ վասն նորին հաւատոյ, եւ ապա անուանեցին զնա տեղի ժողովոյ պիծութեան իրեանց»):

53 «Վկայաբանութիւն Տէր Յազդանահի՝ յաղթանակող վկայի» վերտառութեամբ երկի համատուր բովանդակութիւնն է. *Հուրայէ* գաւառում բանտ էր նետուած ոմն *Յազդանահ*, որի անունը թարգմանում է «Աստուած է նրա պահպանը»: Նա ծնունդ էր մի գիւղում *Կարգայ դ' Լաղանի* մօտ, որը կոչում էր *Օնու*, հմուտ մոգ էր, «աւագ եւ դատաւոր» իր գաւառում: Մկրտուելուց յետոյ («նա հրաժարուեց դիւական *Ջարտուշտի* հետեւորդների մոլորութիւնից, որից յետոյ եկաւ քաղաք [այսպէ՛ս - Ա. Յ.] եւ համայնքի եղբայրների հետ զրոյցներից որոշ բան իմացաւ Քրիստոսի մասին») սկսում է հանդէս գալ մոգերի դէմ: Սրանք թողքում են գաւառի մեծ մոհպատից, որի հրամանով շղթայակապ է արում եւ պահում հինգ տարի մինչեւ Գրիգորի անհատակութիւնը: Այդ ժամանակ հրամայում են նրան տեղափոխել *Հուրայսան* գաւառից *Բեթ Արամայէ*: Մանապարհին *Պերոզարք* քաղաքում, ուր գտնում էր արքայական բանակը, նրան քննում է Մոքեդանմոքեղը, որը խոստանում է քրիստոնեութիւնից հրաժարուելու դէպքում նշանակել մեծ մոհպատ [այսպէ՛ս - Ա. Յ.], հակառակ դէպքում՝ արժանացնել Գրիգորի ճակատագրին: Բանավեցից յետոյ բանտ տեղափոխելու ճանապարհին քրիստոնեաները Յազդանահին ազատելու փորձ են կատարում, սակայն նա հրաժարում է փախուստից եւ վերադառնում բանտ: *Պերոզարքից* Բեթ Արամայէ ճանապարհին, համոզելու հետքական անյաջող փորձից յետոյ մոհպատը մի զինուորի հրամայում է սպանել նրան, եւ Յազդանահը գլխատում է *Տայմա* անունով գիւղում: *Բիհարդաշիր* քաղաքից *Արրոդաք* անունով մի քրիստոնեայ գաղտնի [այսպէ՛ս - Ա. Յ.] տանում է մարմինը *Մահոզէ դ' Բեթ Արամայէ* եւ թաղում տէր Գրիգորի կողքին: Նոյն օրը անհատակին պատժող մոհպատն ընկնում է ձիուց ու մահանում: Իսկ մահապատի տեղը դառնում է քրիստոնեաների կարեւոր սրբատեղի (G. Hoffmann, *Auszüge aus Syrischen Akten Persischer Märtyrer*, էջ 87-91):

54 Սիմիքում Յիզորուզիի ուսանելու եւ Դուինում անհատակուելու տարբերակի օգտին ուշագրաւ փաստարկումներ է բերում Պոլ Պետերսը (P. Peeters, *Une légende Syriacque de S. Iazdbozid*, էջ 17-21), որը, սակայն, չի անդրադառնում Յազդանահի պարագային:

55 Մ. Հասարթեան, *Աշ. աշխ.*, էջ 225-232; Ա. Սահիգեան, *Քասաղի բազիլիկայի ճարտարապետութիւնը*, Երեւան, 1955, էջ 116; Վ. Յարութիւնեան, *Հայկական ճարտարապետութեան պատմութիւն*, Երեւան, 1992, էջ 114-115; P. Cuneo, *La basilique de Tsitsernakavank (Cicernakavank) dans*




- 82 ՀՀ Յուրաքանչյուրի պահպանության վարչության գիտական խորհրդի կողմից հաստատված Յուրաքանչյուրի վերականգնման նախագծի համաձայն՝ վերականգնման ելակետը բեմն ունի Գ փուլի բեմի բարձրությունը (որի հետևում սալաքարերով և օրգանական ապակիով ծածկում շուրֆի մեջ պահպանում է Ա փուլի կառուցված յատակի յետևի մասը՝ խորանի պատի մեջ թողնում քարե աստիճանով վարդապետաց դասով) և Ա փուլի ճակատի գիծը (բարձր ճակատի նոր բազալտեայ շրջանակը դրում է Ա փուլի բեմի ճակատի քարերի վրայ, որոնց առջև եկեղեցու նոր սալապատակի մեջ թողնում շուրֆի շերտի պահպանում է նաև Ա փուլի կառուցված յատակի առջևի մասը): Դ փուլի խաչքարերը տեղադրում են նոր ճակատի բազալտեայ շրջանակի մեջ, իսկ Գ փուլի բեմի քիչ սալաքարը՝ այդ շրջանակի վերին հորիզոնական շարքի կենտրոնում: Ի դեպ, խորանի առջև, դասի մեջ թողնում քառակուսի շուրֆի շերտի պահպանում և ցուցադրում են նաև Ա փուլի կարասը, այն ընդգրկող կառուցվածք և մի-մի կտոր՝ Գ փուլի կրաստաղ յատակից և Ե փուլի կոպտաքար «սալապատակից»:
- 83 Ա. Յակոբեան, Հակարիի վերահսկողի նորայտ վիճակագրերը, էջ 286-287:
- 84 Երկու մասի կիսում վիճակում պահպանվել է նաև այս փուլի սուրբ սեղանի հորիզոնական բառակազմի անշուք քարը՝ կենտրոնում ներքեից քառակուսի փուլով, որով դրվել է սեղանի ոտքի քարի վերելում փորում ելուստի վրայ: Ի տարբերություն ոտքի քարի, որը տեղադրվել է Միծեռնավանքի նորակառուցված խորանում, հորիզոնական այս քարը պահպանության համար տեղադրվել է հարապակի ասանդատում մեջ՝ մեկ ոտքի, առջևի փոքր սեղանի հորիզոնական նյունակի կիսում քարի կտորների հետ միասին, որը ունի միջնադարում հասանաքար դրում է եղել հենց հարապակի ասանդատում մեջ:
- 85 Ըստ այսմ՝ չի կարող ընդունվել համարվել Յակոբ Միսնեանի և Յովհաննես Սանատեանի այն ենթադրությունը, թե մեզ հասած բեմը ունի միջնադարի է (էջ 209-210):
- 86 Այդ խորշերից իրաքանչյուրի բարձրությունից երևում է նրա՝ վերակառուցողական որ փուլին պատկանելը: Ըստ այդմ՝ 3 խորշ փորում է Գ փուլում, իսկ երկուսը՝ Դ-ում: Գ փուլի խորշերից հարապակի մեջ աչ կողմի քարի ներքեում 2 աստիճան է տաշում:
- 87 Այդ քարի վերելում Գ, իսկ ներքեում Դ փուլի խորշ-դարակներ կան:
- 88 Գրչագրով ճշգրիտ հրատարակությունը տե՛ս Ս. Կարապետեան, Ա. Զ. Զ. Զ., էջ 148, 150: Տե՛ս նաև Մ. Հասարթեան, Ա. Զ. Զ., էջ 234-235: Դիսան հայ վիճակագրության, պրակ V, էջ 193 (այստեղ սխալներով):

- 89 Մ. Հասարթեան, Ա. Զ. Զ., էջ 235: Հմմտ. Հ. Ա. ճանաչում, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Երևան, 1946, էջ 171:
- 90 Արձանագրության բովանդակությունից երևում է, որ Միսնեանի բարձրաստիճան հոգեւորական չէ, այլ՝ աշխարհիկ տիրակալ:
- 91 Բաղայ թագաւորների՝ վիճակագրական վերջին յայտնագործությունների շերտի ճշգրտում ժամանակագրությունը տե՛ս Գ. Գրիգորեան, Միսնեանի թագաւորութիւնը (X-XII դարեր) - Հայաստանը և Բրիտանաց Արեւելքը, Երևան, 2000, էջ 120-126:
- 92 Միսնեանի արական անձնանունն ամենայն հավանականությամբ ծագում է պարսկերէն mah «ուսի» բառից, որից ունենք Հրաչեայ Աճառեանի կողմից ստուգաբանում Մահաւազուն (ԺԴ դ.), Մահբանու (Դ դ.), Մահբար (ԺԷ դ.), Մահի (ԺԶ-ԺԷ դ.), Մահմիթ (ԺԳ դ.), Մահմու (ԺԵ դ.) անձնանունները (Հ. Աճառեան, Ա. Զ. Զ., էջ 169-171), ինչպէս նաև ԺԳ դ. վիճակագրում մի քանի անգամ հանդիպող Մահան իգական անունը (տե՛ս Դիսան հայ վիճակագրության, պրակ V, էջ 51 (թիւ 123), 210 (թիւ 740); Գ. Յովսէփեան, Հայոց թառի Ամենավերջին և նոյնանուն յուշարձաններ հայ արուեստի մեջ, Երուսաղէմ, 1937, էջ 23): Հր. Աճառեանը Բաղայի Ա. Զ. Զ. և Վայոց ձոր գաղթած յայտնի Մահաւազունների (Ջուրջեանց) տոհմանունն ծագումը կապում է իրանական Mihr անունն հետ (Ա. Զ. Զ., էջ 312), սակայն հնարար է թույլ թելական համարել նրա՝ «Մեհեան» վերականգնումը և «Միսնեան» պատմության» բազմաթիւ դրուագներում ու վիճակագրում արձանագրում Մահաւազուն անունաձեւը ևս կապել Միսնեանի (<Մահմուսի) անձնանունն հիմքի հետ: Աւելցանք նաև, որ իկ փոքրացուցիչ մասնիկով ձեւը չափազանց տարածում է եղել զարգացած միջնադարի ժամանակաշրջանի Միսնեանի (խորհրդատուության համար երախտագիտությունն են յայտնում Գրիգոր Գրիգորեանի), մատենագրության և վիճակագրության մեջ յիշատակում են Մանկիկ քրեպիսկոպոսը և Ջագիկ իշխանը (Թ դ.), Աշոտիկ իշխանաց իշխանը, Գրիգորիկ, Սմբատիկ, Խոսրովիկ, Սահակիկ, Վահանիկ իշխանները (ԺԱ դ.), Մոմիկ վարդապետը (ԺԴ դ.) և այլն:
- 93 Օգտագործելով տեղը՝ կը ցանկանայինք Ա. Զ. Զ. Արաբեան-Քաշաթաղի իշխանական տունը դեռևս սպասում է իր ուսումնասիրողին: ԺԵ դարից յայտնի Մեղիք-Հայկազեանների տոհմի հետ կապելու մասին Մորուս Հասարթեանի տեսակետի բոլոր հիմնատրուները (Ա. Զ. Զ., էջ 158-161), մեր կարծիքով, լրացուցիչ ստուգման կարիք ունեն: Ընդհակառակը, չափազանց ուշագրաւ է թույլ Արմէն Ղարաբեգեանի այն դիտարկումը (Ա. Կարաբեյան, Ա. Զ. Զ., էջ 42), որ Արաբեանի իշխանական տոհմի անունը, թերեւս, արձանագրում է Է դարում Արուստան ձեւով, ո-

- որ յիշեցնում է Ստեփաննոս Օրբէլեանի գիտագանկից և Տաթևի 1730 թ. պտղացուցակից յայտնի Արուստան գիտանունը (ԺԹ դարում՝ Արուստան-Արքիեան, խորհրդային տարիներին՝ Ալիսաալու): Մովսէս Դասխուրյանը «Աղուանից Պատմության» մեջ ամբողջությամբ արտագրում է դարի մի երկու, որը մենք պայմանականորէն կոչում ենք «684 թ. պատմություն» (Ա. Ա. Աճառեան, Ա. Զ. Զ., էջ 196-201), ասում է. «Յայտուսիկ նայելով նախարարաց Հայոց և Վրաց աշխարհին՝ խորհելին ի ճննողոց իրեանց տալ մնա Ջուսազիք իշխանին» կին: Իսկ նա յԱրուստան [a ձեռագրում՝ յԱրուստան] տոհմէն առնող կին՝ գոյուսոր իշխանին Սիսականեան աշխարհին, ընդ որ յաւե՛ յարախ եղեն Սիսիք» (գիրք Բ, գլ. ԺԹ, էջ 179):
- 94 «Կամեան Ա(ստուծոյ) նորոգ/եցաւ պարիսպս ի ձեռն Հայկազ իշխանիս ի առ(ա)ջն(որ)դով/թի(ւ)ն Մ(ր)տ(ի)շ եպ(իսկոպո)ս(ի)ն: Թ(վ)ի(ն) Ռ(Կ)Բ [1613]» (Ս. Կարապետեան, Ա. Զ. Զ., էջ 149: Հմմտ. Մ. Հասարթեան, Ա. Զ. Զ., էջ 236: Դիսան հայ վիճակագրության, պրակ V, էջ 193): Անհրաժեշտ է նշել, որ Տաթևի արքեպիսկոպոսարանում Մկրտիչ եպիսկոպոս չի եղել, ուստի պետք է արձանագրենք, որ մի պահ (գրե՛ ժԷ դ. սկզբին) Ծիծեռնավանքը եպիսկոպոսագիտ է դարձել: Տեղին նշենք նաև, որ ժամանակով այս վիճակին մօտ է պեղումների ընթացքում Ռատակեանների գերեզմանաքարի կողքին, հողի տակ յայտնաբերված «բազալտե, երկաստիճան հիմքով ուղղանկյունաձեւ» տապալաքարի երեսի (էջ 204) ուշագրաւ արձանագրությունը. Ա. ՅՍ է ՀԱՆԳԻԻԻ ՍՍ ՄԱՐ/ԿՈՍ ՊԱՐՈՒՆՏ[Է]ՐԻՆ. ԹՎԻ[Ն] ՌԻԻ [1621]:
- 95 Մորուս Հասարթեանի կարծիքով՝ դա կատարվել է 1779 թ. եկեղեցու տանիքում զանգակատուն կառուցելու հետ միասին (Ա. Զ. Զ., էջ 229): Սակայն, քանի որ զանգակատունը կառուցում է դեղնատուն սրբատաշ ֆելզիտատոֆով, մենք աւելի հաւանական ենք համարում ենթադրել, որ որձաքարից կրկնամոյթերը Ծիծեռնավանքի հարապակի մոյթերին և աւելացուել են բազալտեայ պարիսպը կառուցելու հետ միասնական:
- 96 Վերականգնության նախագծով՝ եկեղեցու աղօթարանը պատուեց բազալտեայ սալապատակով՝ որմնախարսիս առաջին շարքի քարերի կեսի միջով, յետևի մասում՝ թեքության պահպանումով, իսկ առջևում՝ 6 սմ բարձրությամբ դասի


- հատուածում՝ հորիզոնական գծով (արեւելեան մոյթերի կոպտաքար հիմնախարսիսիսի կեսի միջով):
- 97 «Նորոգեցաւ դաճ(ա)րս // և ս(ուր)ք զանկա(կա)րունս // ի ծ(ա)ման(ա)կն Իբրահիմ // խանին, ձեռ(ա)նքն // Աւուրքի որդի Նաջա/զուլին խնամորկցի, // և էր վաքիլ գոր/ծ(ո)յս ուղի Յուսան: // Թ(ի)ն Ռ(Ի)Ը [1779]» (Մ. Հասարթեան, Ա. Զ. Զ., էջ 236: Խնամորկը իրօք ճիշտ է թույլ դիտել խնամակի, ոչ թէ խնամորկ գիտական մի ձեւ): Գրաբանակների կողմից տեղահան է արուած եղել նաև այս քարը: Նրա մի կտորը (վերելի ձախ անկյունը) յայտնաբերուել է պեղումների ժամանակ և տեղադրուել իր խորշի մեջ (էջ 202): Տեղին նշենք, որ ժամանակով այս վիճակին մօտ է եկեղեցու հարաւ-արեւմտեան դռան առջև, 2 մ հեռաւորութեան վրայ տեղադրուած Ռատակեանների մեծ ու գեղաքանակ ուղղանկյուն տապալաքարի արձանագրութիւնը, որի տակ հնագէտները խմբային թաղում յայտնաբերեցին: Ընդարձակ վիճակից ճշգրիտ հրատարակել է Սամուէլ Կարապետեանը (Ա. Զ. Զ., էջ 149-150), որը վրիպել է միայն թուագրումն ընթերցելիս: Վերջանում ՌՄԾԸ-ի փոխարէն, քարի վրայ ընթերցում է ՌՄԾԸ, այսինքն՝ 1769 թուականը (Մ տառը առկայ է «Աստուոր» բառի մեջ և այլ պատկեր ունի, քան Ժ-ն):
- 98 Խաչը պատրաստուեց Աշտարակի արհեստանոցի դարբին վարպետների կողմից:
- 99 Վերականգնության նախագծով՝ այդ կառուածակ, խտածածակ և կենտրոնական մասի հատուածում գրեթէ ամբողջովին փլուած տանիքը թաղի վերականգնումից յետոյ պատուեց կղմիդրով, որի համար ընտրուեց Գ փուլի կղմիդրին արտաքինից մասն «պորտուգալական» կոչում տիպի կղմիդր («առուակը» և կիսազանակը մեկ կտորով)՝ հին չափերի պահպանումով (այն պատրաստուեցին Արտաշատի արհեստանոցի վարպետները «Յուսայի» յայտնի կալից):
- 100 Վերականգնության նախագծով՝ այդ «քիւրը» հանուեց և փոխարինուեց այն ատամիկներով քիւի չափերով տաշում նոր ատամաքիւի շարքերով, որը յայտնաբերուել էր տանիքի հիսախային կողմի պեղումներից և ենթադրաբար վերագրուել վերակառուցողական Բ փուլին: Իսկ հնագոյն ատամաքիւը որոշուեց տեղադրել նոր շարքերից մեկի մեջ՝ արեւմտեան ճակատի հատուածում:



Աստուածատուր նահատակի « լուշատախտակի » արձանագրութիւնը  
(բոլոր լուսանկարները Յ. Սիմոնեանի)



Հարաւ-արեւելեան դռան արեւելեան ճակատի արձանագրութիւնները



Գիորգ Աշխատատրի վիմագիրը ճիւղիս-արեւելեան կրկնակամարի արեւելեան կրկնաքարերին



Մհտիկ իշխանի արձանագրութիւնը խորանի ներսում




Մարկոս պարոնտերի տապանաքարի արձանագրութիւնը

ԴԱԴԻ ՎԱՆՔ  
(ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)

Պ. Ա. Չոբանեան

Միջնադարի վերջերս կառուցուած շինարարական փուլերի  
(գծագրի միջոցով Յ. Սամանյանի)



Դադի վանքը իր հնութեամբ Այսրկովկասի եւ, մասնաւորապէս՝ Հայաստանի, հնագոյն քրիստոնէական սրբավայրերից է: Սակաւ են այն սրբատեղիները, որոնց հիմնադրումը աւանդաբար կապուում է անմիջականօրէն առաքեալների կամ նրանց աշակերտների գործունէութեան հետ: Ըստ այդմ, ուշագրաւ է այն աւանդութիւնը, որ պահպանուել է Դադի վանքի հիմնադրութեան մասին: Վանական վարդապետի «Այլ բան ասացեալ Վանական վարդապետին» թղթում, որ հաւանաբար առնուած է Միքայէլ Ասորու «Ժամանակագրութիւնից», ասուում է.

«Դադիում յեւթանասնիցն, որ զնաց հրամանաւ Թադէոսի ի Մեծն Հայք եւ ի կողմանս հիւսիսոյ, եւ լուեալ զմահն Աբգարու եւ դարձեալ եմուտ ի Փոքր Սիւնիս եւ, կրանաւորեալ անդէն ծածկաբար, վախճանեցաւ, եւ տեղին շինեցաւ վանք եւ յանուն նորա կոչեցաւ Դադիու...»<sup>1</sup>: Այսպիսով, Դադի վանք է կոչուում Թադեոս առաքեալի աշակերտներից մէկի՝ Դադի, անունից ու նաեւ ինքնաջ վանք՝ խոլթի (բլրի) վրայ կառուցուած լինելու կամ մերձակայ ինքու (ինքնաջ) դիւղի անունից, որը վանքին են նուիրել «Ես Գոնցէս ու որդիքս՝ Հասան ու Վարհամ, թողն Դաւփեանց, տվաք ի Դադի վանս զմեր հայրենիքն զԽուղ՝ իւր սահմանովն...»<sup>2</sup>: Հայր Դեռոնդ Ալիշանի թուագրմամբ «Ժամանակ շինութեան վանացս հարկ է, թէ յառաջնումն դարու իցէ, զի Գոշն Առաքելադիր կոչէ ուխտ զսա»<sup>3</sup>:

Սեդրակ Բարխուդարեանի թուագրմամբ, վանքը պէտք է հիմնարկուած լինի 4-5-րդ դարերում<sup>4</sup>:

Առայժմ մեր ունեցած վաղագոյն յիշատակութիւնը Դադի վանքի մասին այն տեղեկութիւնն է, որ պահպանուել է Մովսէս Կաղանկատուացու մօտ եւ որը վերաբերում է 9-րդ դարի առաջին կէսի իրադարձութիւններին. «Ձայս Վարազ Տրդատ եւ զորդի իւր Ստեփաննոս Ներսէս ի Փիլիպեան՝ ազգակիցն իւրեանց սպան ի միում ժամու ի խորածորն, որ կոչի Դադոյի վանք»<sup>5</sup>:

12-րդ դարի կէսերին, երբ Գանձակում քաղաքադուր իւր կարգուած ինքնատուրին ապստամբեց սուլթան Մասուդի դէմ, ապա Պարսկաստանից ապստամբութիւնը ճնշելու համար ժամանած Չոլի զօրապետը ապստամբների հետ հաշուեյարդար տեսնելուց յետոյ արշաւեց նաեւ Արցախ եւ, ըստ Մխիթար Գոշի վկայութեան, 1145 թ. «էառ զամենայն ամրոցս նոցա, քակեաց եկեղեցիսն եւ այրեաց զվանորեայսն, կոտորեաց զազատսն եւ դերեաց զզօրականսն...»<sup>6</sup>:

Յաջորդ տարին եւս վերադառնալով Այսրկովկաս, Չոլի ամիրան կրկին արշաւում է «ի կողմն ինչինոյ, Տանձեաց եւ Ադախայ, քանզի յառաջնում նուագին ոչ մնացին ընդ ձեռամբ նորա դղեակք այնոքիկ, զորս էառն, այլ սակաւ ինչ, մնացեալքն յազատացն անտի, որք էին դողեալք յանտառս մայրեաց, առին դարձեալ զբերդ-ամրոցսն իւրեանց եւ դարձեալ ապստամբութեամբ վարէին ընդ տաճկացն»<sup>7</sup>: